ՔԱՂՎԱԾՔ

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի՝
2024 թվականի մարտի 5-ի, ժամը 14:00-ի նիստի
N 7 արձանագրությունից

ԼՍԵՑԻՆ.- **«ՀՀ կապիտալի շուկայի կայացման ուղիներն ու հեռանկարները»** խորագրով **տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Աշոտ Բորիսի Սալնազարյանի անվան ուսանողական գիտաժողովի նյութերի** հրատարակությունը երաշխավորելու մասին հարցը:

Զեկուցող՝ գիտության գծով պրոռեկտոր, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր **Թ.Մ.Մկրտչյան**:

Զեկուցողը նշեց. գիտաժողովը տեղի է ունեցել 2023 թվականի ապրիլի 13-14-ը, որը կազմակերպել էին Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանը (ՀՊՏՀ), «Արմսվիսբանկ» ՓԲԸ-ն, Հայաստանի ֆոնդային բորսան և Կենտրոնական դեպոզիտարիան (AMX), «Էփրիքոթ կապիտալ» ՓԲԸ-ն և Եվրասիական ֆոնդային բորսաների միությունը: Այն նվիրված է տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Աշոտ Սալնազարյանի հիշատակին: Գիտաժողովին մասնակցության համար դիմած աշխատանքներն անցել էին ներկայացվող պահանջներին համապատասխանության ստուգում և անանուն գրախոսություն. մասնակցության (զեկուցման) թույլատրվել են դրական գնահատականի արժանացած 14 աշխատանքներ: Գիտաժողովի նյութերը հրատարակության են երաշխավորվել գիտական խորհրդին կից գիտամեթոդական և հրատարակչական հանձնաժողովների նիստերում: Կատարված են անհրաժեշտ խմբագրական աշխատանքները: Զեկուցողը նշեց նաև, որ համաֆինանսավորող կազմակերպությունները հաղթող ուսանողներին խրախուսել են դրամական պարգևներով և ֆինանսավորել են տպագրական ծախսերը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.-

Դոցենտ Ա.Վ.Գրիգորյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Հիմք ընդունելով գիտական խորհրդին կից գիտամեթոդական և հրատարակչական հանձնաժողովների նիստերի որոշումները՝ **«ՀՀ կապիտալի շուկայի կայացման ուղիներն ու հեռանկարները»** խորագրով **տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Աշոտ Բորիսի Սալնազարյանի անվան ուսանողական գիտաժողովի նյութերը** երաշխավորել հրատարակության: Որոշումն ընդունվեց բաց քվեարկությամբ, միաձայն. կողմ՝ 51, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Գիտական խորհրդի նիստը նախագահող՝
ռեկտորի պարտականությունները կատարող,
ուսումնական աշխատանքների
գծով պրոռեկտոր **Ա. Վ. Գրիգորյան**

Գիտական խորհրդի քարտուղար՝ **Ն. Հ. Գարբինյան**

2024 թ. մարտի 5
Երևան